

Այսպէս ուրեմն յետ այնչափ ակն յայտնի վկայութեանց՝ հուսակ 'ի վախճանի ընդ հաւատարմագունին 'ի բանս Ղազարայ փարպեցւոյ՝ պէտք ենք ըսել, թէ « Արարատն էր գլուխ (բովանդակ Արմենիոյ) աշխարհիս Հայոց և միւլոց »:

Եւ ինչպէս Հայք՝ այսպէս ալ անոնց մասնաւոր երկիրն Արարատ՝ ոչ միայն իրեն բնական զրից համար, այլ նաև բարօրական և քաղաքական ազդեցութեամբ՝ էր ազնուական ժողովուրդ թորգումացւոց կամ Արմենական ցեղերու մէջ, վասն զի ըստ պատմութեան

հոն եղաւ միշտ աթոռն և կայսն մեր թագաւորներուն . ամէն նշանաւոր գէպք մեր ազգային պատմութեան՝ զԱրարատ կը յիշեցնեն: Հոն անաւ հայկական այն զուտ բարբառն՝ առանց կորանցընելու բնաւ իւր առանձնաշնորհութիւնն՝ յընթացս բազմահոլով դարուց, որպէս յիտոյ 'ի ժամանակս Արշակունի թագաւորաց մերոյ՝ եղաւ արքունական և դպրութեան լեզու: Միով բանիւ՝ հոն սկսաւ և անկէ տարածուեցաւ քրիստոնէութիւնն և անոր հետ 'ի միասին հայ դպրութեան և քաղաքականութեան ոսկեդարն:

Կը շարունակուի:

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՄԵՆ» ԲԱՌԻՆ

Ար և իցէ բառի այս և կամ այն ինչ եղանակաւ գրուիլն՝ կը ստուգուի նախնաց ընտիր ձեռագրաց միօրինակ անփոփոխ գրութենէն, և կամ եթէ բառն բաղադրեալ լինի՝ զայն կազմող մասանց ուղղագրութենէն: Ուզելով գիտողութիւն մ'ընել ամեն բառին ուղղագրութեան նկատմամբ, կը յիշեցնեմք ընթերցողաց՝ որ երկար ժամանակէ 'ի վեր ազգային հրատարակութեանց մէջ, եթէ լինին օրագիրք կամ ուսումնաթերթք և եթէ մասնական մատենք, անմիաբանութիւն կը տեսնուի սոյն բառին գրութեան մէջ, ոմանց զբողմելով զայն և տառիւ, իսկ այլոց վերագասելով է տառիւ գրութիւնն, և սակաւուց ևս՝ իբրև հաշտաբարք երկուց կողմանցն, մի և նոյն հասուածի մամ մատենի մէջ անխտիր մերթ և և մերթ է տառիւ գրելով: Այս զանազան գրութեանց օրինակ բերելն հոս՝ աւելորդ կը համարեմք, այլ կը յայտնեմք որ գիտողութիւնն իստպարական վրիպակաց ցուցակէն դուրս է: Բայց բնաւ զարմանք չի պատճառեր մեզ այս զանազանութիւնն ներկայ ժամանակիս մատենագրաց մէջ, մինչդեռ քնոյն տարաձայնութիւնն կը տեսնեմք նաև յնտիր ձեռագիրս նոխնեաց. որով և այժմ չեմք կարող պարտաւորել զգրիչս՝ այսու և կամ այնու կերպիւ միայն 'ի կիրածելու զայն, իբրև անփոփոխելի աւանդեալ օրէնք մի 'ի նախնեաց գրութենէ. բայց և ոչ ոք կ'արգելու մեզ անյուշս՝ քննելու նոյն բառին կազմութիւնն, (եթէ՛ համարեմք զայն արմատական բառ լինել) և ընտրելագոյն դա-

տելու այս ինչ գրութեան կերպն քան զմիւսն:

Ընդհանրապէս կը կարծուի որ ամէն կամ ամէն կրճատումն լինի ամենայն ձևին, ուստի և վերջնոյս և տառն անփոփոխ պահելի նաև 'ի համառոտութեանն՝ գրելով ամեն, այսու որոշելու համար միանգամայն յայլազգի ամէն (եւ յիցի) հնչմանէն: — Թէպէտ և ստուգապէս ամենն՝ ամենայնի կրճատումն համարեմք, կամ լաւ ևս՝ ամենայնն՝ ամենի ածանցումն, սակայն կը մնայ դարձեալ քննելի՝ թէ արդեօք ամէն կամ ամենայնն ինչ մասերէ բաղկացեալ են, ուստի ինչ է անոնց սկզբնական ձևն: Տարաւոյս չկայ՝ որ հաւնայն, ամէն և ամենայն՝ նշանակութեամբ բնաւ տարբերութիւն չունին իւրաքանչիւր և և թէ մի և նոյն բառին գրութեան գաւնազան տարազներ են, որոց կազմութեան մասին այլ և այլ կարծիք յայտնուած են 'ի քերականագիրաց. յորոց ոմանք համարեցան որ ամենայն՝ ծագած է ամէն արմատէն, ածանցմամբ այն մասերէն, որ կ'երեկ նաև ուրիշ քանի մի բառերու վրայ, զոր օրինակ՝ մի-այն, առժամ-այն, հաւմ-այն, վաղորդ-այն, գիշեր-այն, եղնիկ-այն, և այլն, և թէ ըստ օրինաց բառակազմութեան՝ կարճագոյն կարող է արմատ համարուիլ երկարագոյնին, և ոչ թէ ընդհակառակն: Այլք յենելով դարձեալ բառակազմութեան օրինաց վրայ, և ոչ դնելով բազմաթիւ բառերու մէջ ձայնաւորաց փոփոխմանցն, հաւանական համարեցան ածանցեալ հաւնայն բառին այ երկարաբառին՝ է ձայնի փոփոխումն. որով գրեցին հաւնայն, հաւմն, աւմն. (և տառին բառերու սկիզբն զանազին կամ չգտնուիլն մեծ կարևորութիւն չունի, որոյ անթիւ ինչ օրինակք, ինչպէս հօր-գոր,

համբաւում-ամբաստում, հոգի-ոգի, հանդերձաւ, պետ-անդերձապետ, հակա-ակա, հսկում-սկում, և այլն, և այլն): Պանուեցան և այլք՝ որք վարդապետեցին թէ ամէն բառին մէջ առանձն ժառողական մասնական պաշտոն վարած լինի, ինչպէս ուրիշ սակաւաթիւ բառերու մէջ, զոր օրինակ՝ կամայ-ակամայ, տխմար-տխմար, ժուխ-աժուխ, և այլն, որով և ուզեցին գրել և ընթերտ նուա-մէն (ոչ մէն, ոչ մին, բոլորն): Այս և բեք տեսակ օրինաւոր կարծեաց քով թերեւ առ ոմանս բռնադրօսեալ, այլ ըստ մեզ ոչ հակառակամարտ ճշմարտութեան երեւի, եթէ համարիմք հաւայն կամ ամէն բառին արմատական լինել լինել է (հակ, է, հոսթիան), յօգեալ ընդ մասնականն հաւ (կից, բոլոր նշանակող), որով գրելի համէ, հաւէն, ամէն, (ն տառն առ նըրով իբրեւ որոշիչ էութեանն՝ որոյ վրայդ կը խօսուի. զոր օրինակ՝ ամէն մարդ, փոխանակ հաւ հոսթիան մարդկային). յորմէ այն եւեմանցով կազմեալ է ամենայն, ըստ հղովմանց օրինաց՝ էն վերջաւորութիւնն փոխուելով յ'նէ, բառին վերջը վանկ մ'աւելնալուն պատճառաւ. որով կը գրեմք ամէն, ամենի, ամենիչ, ամենից, ամենայն, ամենայնիւ, ամենեկին, և այլն. այսպէս և բարդութեանց մէջ նոյն օրինաբ' ընտրելագոյն է ամէն քան զամէն, զոր օրինակ՝ ամենքնուոր, ամենագետ, ամենագոր, և այլն:

1 Կարծես հոգով բառին մէջ մասնական կազմեալ ձեւ ալ կերպով մի կը նպաստէ այս մեր կարծեաց, զի հոգով շատ

Արդ մինչև ցայժմ յառաջ բերած կարծեաց որն ալ ընդունելու լինիմք, պէտք է ընտրելագոյն համարիմք ամէն ուղղագրութիւնն քան զամէն. մասնաւոր որ գորաբառի մէջ էն վերջաւորութեամբ բառեր ամենաբոլոր կը գտնուին, և այն ըստ մեծի մասին օտարազգի և կամ կրօնատեալ բառեր են. զոր օրինակ՝ զնէ, բիրնէ, բորնէ, դէն, աղնէ, հնչնէ, գննէ, և այլն: Յայտ է թէ խնդիրն այնարհաբառ լեզուի նկատմամբ է՝ և ոչ գրաբառի, որոյ մէջ սովորական և ընտիր կերպերն են ամենայն և հաւայն գրութիւններն, իսկ ամէն ոմանովոր եղած է, և այժմ 'ի տաղաչափութեան միայն ներքի դատուած է իւր գոյութիւնն:

Իսկ եթէ ուզենք խնդիրն հայկական լեզուի սահմանէն արտաքոյ հանել, և ուշ դնելով լատինական omnis և omne ձեւերուն՝ հայկական ամէնէն անոնց հետ բաղդատել, և ուրիշ աղբիւր մը խնդրել՝ յորմէ յառաջ եկած լինին գրութեանց այս նմանաձայնութիւնը, այն ատեն խնդիրն տարբեր կերպարանք կ'առնու, և աւելի կամ նուազ հաւանական ենթադրութեանց ստացարեւել կ'բացուի, կարծեմ՝ առանց ստուգագոյն և անհրեքի լուծում մի տալու խնդրոյն:

Հ. Ա. Թ.

անգամ՝ ի կրի ածեալ է 'ի նախնեաց անպատեար' հոգեւոր նշանակութեամբ, իբրեւ հոգեւոր:

Հին բժշկարան Պագկայ քաղաքորի. — Այս բժշկարանիս մեր ձեռքն ունեցած օրինակն գրուած է 'ի 1294 թուին, ընտիր մագալաթի վրայ, մի և նոյն գրով մինչև վերջն, բայց կը պարունակէ երեք մեծ բժշկարաններ. առաջինն է ամենէն հնագոյնն, որ կը մակաղբի. « Բժշկարան զոր փոխած է 'ի տահիկ լեզուէ 'ի Հայս, 'ի ժամանակս յաղթող Թագաւորին Հայոց Պագկայ »: Երկրորդն է Մխիթարայ Հերացոյ բժշկարանն, (տես Զերմանց գիրքն) պակասաւոր. իսկ երրորդն՝ ընդարձակագոյն քան զառաջին երկուսն՝ կը բովանդակէ ամէն տեսակ հիւանդութեանց կերպերն և ցեղերն: Չայս ընտրելագոյն կրնամք համարիլ մեր ամէն բժշկարաններէն աւելի. յորս շատ տեսակ հմտութիւն կայ և ոճով ալ գրուած է: Առաջինն որ Պագկայ Թագաւորին հրամանաւ թարգմանուած է, կարծեմ թէ այն ալ քաղաածոյ է, և ոչ է մէկ գրչի գործ. վասն զի մէջ կը յիշուին Յախէ բժիշկն, Գրիգոր Մագիստրոս և Հեթում Թագաւորն. որով հաւանական կ'երևի որ թէպէտ մեծագոյն մասն թարգմանութիւն ըլլայ ընտիր բժշկի, սակայն շատ բան ալ յետուաւեցուած է մէջն. և կրնամք ըսել թէ աւելի ղեղազոգութեան (pharmacopée, pharmacie) գիրք մ'է, որ կ'ուսուցանէ մեծ հմտութեամբ՝ թէ ինչպէս պէտք է շինել զղեղորայս, և ինչպէս պէտք է որ բժիշկն ճանչնայ զերակս և զայլ նշանս հիւանդութեանց:

